

**Վիճակագրական արտադրանք – Արտաքին առևտրի (ներմուծման, արտահանման) գների ինդեքս (առանց հումանիտար օգնության)/ Ներմուծման միջին գների (միջին արժեքի) ինդեքսներ (ամսական), Արտահանման միջին գների (միջին արժեքի) ինդեքս (ամսական)**

Գործընթացներ	Ենթագործընթացներ	Ենթագործընթացի նկարագրություն
1. <i>Կարիքների ձևակերպում</i>		
	1.1 Կարիքների բացահայտում	<p>Արտաքին առևտրի՝ ներմուծման, արտահանման միջին գների ինդեքսի հաշվարկման անհրաժեշտությունը պայմանավորված է ներմուծման և արտահանման գների մակարդակի փոփոխության վիճակագրական դիտարկման ապահովմամբ, հաշվարկված վիճակագրական ցուցանիշների նկատմամբ ինչպես Արմստատի վիճակագրություն վարող կառուցվածքային ստորաբաժանումների, այնպես էլ վիճակագրական տեղեկատվություն օգտագործողների պահանջով: Արտաքին առևտրի գների ինդեքսը կիրառվում է տնտեսության բնագավառում ռազմավարությունների մշակման, մարտավարական խնդիրների լուծման, տնտեսության ճյուղերում օտարերկրյա ներդրումների վերլուծության, բիզնես միջավայրի վերլուծության, սոցիալական զարգացման միտումների բացահայտման և այլ նպատակներով, իսկ Արմստատի ներքին նպատակների համար կիրառվում է ազգային հաշիվներում որպես դեֆլյատոր: Արտաքին առևտրի գների ինդեքսի խմբավորումներն ըստ անհրաժեշտության տրամադրվում են տեղեկատվության հիմնական օգտագործողներին՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպություններին, գործարար համայնքին, զանգվածային լրատվամիջոցներին, Կենտրոնական բանկին, միջազգային կազմակերպություններին և դրա նկատմամբ պահանջարկ ունեցող այլ սուբյեկտներին՝ պահպանելով դրանց գաղտնիությանը:</p>

		վերագրվող օրենսդրական պահանջները:
	1.2 Խորհրդակցում և կարիքների հաստատում	Արտաքին առևտրի միջին գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանության հետ կապված խորհրդատվություններ իրականացվել են ԱՄՆ-ի փորձագետների հետ:
	1.3 Արտադրանքի նպատակների սահմանում	Միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու նպատակով, ըստ անհրաժեշտության, կատարվում են արտաքին առևտրի միջին գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանական ուսումնասիրություններ: Պարբերաբար ուսումնասիրվում է նաև վիճակագրական տեղեկատվության օգտագործողների կարծիքը՝ կապված Արմստատի հնգամյա և տարեկան վիճակագրական ծրագրերի հետ՝ ինչպես առաջարկվող նոր ցուցանիշների ընդգրկման, այնպես էլ առկա ցուցանիշների վերաբերյալ նրանց վերաբերմունքի, ակնկալիքների ու պահանջումների բացահայտման նպատակով: Վիճակագրական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության օգտագործողների կարծիքների ուսումնասիրությունն իրականացվում է ինչպես նրանց հետ աշխատանքային քննարկումների անցկացման միջոցով, այնպես էլ Արմստատի պաշտոնական կայքում առկա «Օգտագործողների բավարարվածության հետազոտության հարցաթերթի» միջոցով (տես՝ <a href="https://www.armstat.am/am/?nid=131">https://www.armstat.am/am/?nid=131</a> հղումը):
	1.4 Հասկացությունների որոշում	Արտաքին առևտրի միջին գների կամ միավորի արժեքի ինդեքսի հաշվարկման հիմքում ընկած են հետևյալ հայեցակարգերը՝ 1. միջազգային չափորոշիչներին համապատասխան արտաքին առևտրի միջին գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանության ընտրություն, 2. արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ (այսուհետ՝ ԱՏԳԱԱ) դասակարգչի կիրառում ըստ հետևյալ ուղղությունների՝ բոլոր երկրներ, ԱՊՀ երկրներ, աշխարհի այլ երկրներ, այդ թվում՝ Եվրոպական միության (այսուհետ՝ ԵՄ) երկրներ, 3. մաքսային վիճակագրության հիման վրա ձևավորված սկզբնական տվյալների ներմուծման, արտահանման բեռնամաքսային հայտարարագրերի

		<p>(ղեկլարացիաների) տեղեկատվության մշակում:</p> <p>Արտաքին առևտրի միջին գների ինդեքսի հիմնական օգտագործող են հանդիսանում Արմատատի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների, վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրություն վարող կառուցվածքային ստորաբաժանումները: Մշակող ռազմավարությունը հնարավորության սահմաններում հաշվի է առնում նաև այն բոլոր առաջարկություններն ու պահանջները, որոնք ներկայացվում են վերոհիշյալ ստորաբաժանումների կողմից:</p>
	1.5 Տվյալների առկայության ստուգում	<p>Այս վիճակագրական արտադրանքի համար տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա: Արտաքին առևտրի միջին գների ինդեքսի հաշվարկման համար հիմք հանդիսացող տեղեկատվությունն իր մեջ ընդգրկում է տվյալներ ներմուծվող, արտահանվող ապրանքատեսակների քանակի և ծավալի մասին, ինչը հիմքն է հետագա հաշվարկների:</p>
	1.6 Բիզնես մոդելի նախապատրաստում	<p>Մինչ արտաքին առևտրի միջին գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանության մշակումը, առանցքային խնդիրների մասով իրականացվել են աշխատանքային քննարկումներ ինչպես Արմատատի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների, այնպես էլ տարբեր շահագրգիռ մարմինների, գիտական կազմակերպությունների, օգտագործողների հետ, իսկ հնարավորության դեպքում հաշվի է առնվում նաև միջազգային փորձագետների կարծիքը:</p>
	<i>2. Նախագծում</i>	
	2.1 Արդյունքների նախագծում	<p>Արտաքին առևտրի միջին գների ինդեքսի ձևավորման գործընթացի հիմնական փուլերն են՝</p> <p>1. արտաքին առևտրի տեղեկատվական բազայի թարմացում,</p>

		<p>2. ազրեգացման տարբեր մակարդակներում ցուցանիշների կշռման համակարգի ձևավորում ըստ հետևյալ ուղղությունների՝ բոլոր երկրներ, ԱՊՀ երկրներ, աշխարհի այլ երկրներ, այդ թվում՝ ԵՄ երկրներ,</p> <p>3. գնային մեծ շեղումներից խուսափելու համար ինդեքսների շարքի վերին և ստորին թույլատրելի սահմանների հարթեցման մեթոդի կիրառում առանձին ապրանքատեսակների գների միջին կշռված քառակուսային շեղումների և դրանց հիման վրա հաշվարկված տատանման (վարիացիոն) գործակիցների օգնությամբ (միջոցով),</p> <p>4. ներմուծման, արտահանման միջին գների ինդեքսի հաշվարկ ըստ ԱՏԳԱԱ դասակարգչի հետևյալ ուղղություններով՝ բոլոր երկրներ, ԱՊՀ երկրներ, աշխարհի այլ երկրներ, այդ թվում՝ ԵՄ երկրներ,</p> <p>5. գների ինդեքսների հրապարակում:</p>
	<p>2.2 Փոփոխականների նկարագրությունների նախագծում</p>	<p><u>Համակցություն</u> - ՀՀ արտաքին առևտրում ներմուծման, արտահանման ծավալների (բնաիրային և արժեքային արտահայտությամբ) մասին տեղեկատվությունն է,</p> <p><u>աշխարհագրական ընդգրկունություն</u> - ՀՀ ողջ տնտեսական տարածքը, ինչը համապատասխանեցված է նրա մաքսային տարածքին,</p> <p><u>ապրանքի ընդգրկունություն</u> - ինդեքսների հաշվարկին մասնակցող ապրանքների ընդգրկունակությունը պայմանավորված է բազիսային տարում ներմուծված, արտահանված ապրանքների համակցությամբ և կիրառվող սահմանային գործակիցներով,</p> <p><u>միավորի արժեքի գին</u> - ապրանքի արժեքի և քանակի հարաբերությունն է, որտեղ ապրանքի ամենացածր դետալացման (մանրամասնեցման) պայմաններում անգամ կարող են երկու կամ մի քանի որակապես տարբեր ապրանքներ դասակարգված լինել միևնույն տասանիշ ծածկագրով,</p> <p><u>սահմանային գործակիցներ</u> - գնային մեծ շեղումներից խուսափելու համար օգտագործվում է ինդեքսների շարքի վերին և ստորին թույլատրելի սահմանների հարթեցման մեթոդը՝ սահմանային գործակիցների կիրառմամբ: Այն ապրանքները, որոնք ունեն հաշվարկված սահմանային գործակցից ավելի գնային տատանումներ՝ (նվազման կամ աճման միտումով), այսինքն միջին արժեքի</p>

		փոփոխությունները (ինդեքսները) դուրս են մնում այդ միջակայքերից, չեն մասնակցում հետագա հաշվարկներին: Ինդեքսի թույլատրելի վերին և ստորին սահմանները որոշվում են առանձին ապրանքատեսակների գների միջին կշռված քառակուսային շեղումների և դրանց հիման վրա հաշվարկված տատանման (վարիացիոն) գործակիցների օգնությամբ (միջոցով):
	2.3 Տվյալների հավաքման նախագծում	Տվյալների հավաքումն իրականացվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայության կողմից:
	2.4 Գլխավոր համակցության և ընտրանքի նախագծում	Տես 4.1 կետը:
	2.5 Մշակման և վերլուծության նախագծում	Վիճակագրական տեղեկատվության տրամադրումից հետո վիճակագրական ցուցանիշները ենթարկվում են թվաբանական և տրամաբանական ստուգումների, որոնց հիման վրա անհրաժեշտության դեպքում իրականացվում են ճշգրտումներ:
	2.6 Արտադրության համակարգերի և գործընթացի նախագծում	Վիճակագրական տեղեկատվության տրամադրումից մինչև ամփոփումը կատարվում են նախապատրաստական աշխատանքներ, մասնավորապես էլեկտրոնային հաշվարկային աղյուսակների ստեղծում:
	<i>3. Կառուցում</i>	
	3.1 Հավաքման գործիքի կառուցում	Տես 4.2 կետը:
	3.2 Գործընթացի բաղադրիչների կառուցում կամ ամրապնդում	Տեղեկատվության ստուգաճշտման համար առկա են անհրաժեշտ մեթոդական ցուցումներ: MS Office Access ծրագրային փաթեթում մշակվել են տվյալների թվաբանական ու տրամաբանական ստուգումների իրականացման համար անհրաժեշտ գործիքներ՝ հանրագումարների, տրամաբանական կապերի, ծածկագրերի համապատասխանության և այլ ավտոմատ ստուգումների համակարգեր:
	3.3 Տարածման բաղադրիչների կառուցում կամ ամրապնդում	Տեղեկատվության տարածման համար առկա են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային տարբերակներով տեղեկատվության հրապարակման հնարավորություններ՝ ամսական, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ:

	<p>3.4 Գործընթացների կարգավորում</p>	<p>Վիճակագրական արտադրանքի ստացումն իրականացվում է հետևյալ փուլերով՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. MS Office Access ծրագրային փաթեթով համապատասխան տեղեկատվության ստացում ՀՀ վիճակագրական կոմիտեի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնից,</li> <li>2. տեղեկատվության թվաբանական և տրամաբանական ստուգումներ, ճշգրտումներ,</li> <li>3. վիճակագրական արտադրանքի վերջնական արդյունքի հաշվարկ,</li> <li>4. տեղեկատվության տրամադրում կառուցվածքային ստորաբաժանումներին հետագա հաշվարկների համար,</li> <li>5. վիճակագրական տեղեկատվության օգտագործողներին ամփոփ տեղեկատվության տրամադրում:</li> </ol>
	<p>3.5 Արտադրության համակարգի փորձարկում</p>	<p>Կիրառվող ԱՏԳԱԱ դասակարգչի (դասակարգված՝ ըստ 1339 ապրանքային ենթախմբերի, ըստ 97 ապրանքային խմբերի, ըստ 21 ապրանքային բաժինների) ապրանքատեսակների ծածկագրերի փոփոխման պարագայում կատարվում է միավորի արժեքի ինդեքսի հաշվարկման փորձարկում դասակարգչի համապատասխան փոփոխություններով:</p>
	<p>3.6 Վիճակագրական բիզնես գործընթացի փորձարկում</p>	<p>Մեթոդաբանական փոփոխություններով պայմանավորված ծրագրային ապահովման փաթեթում ևս կատարվում է համապատասխան փոփոխություն, իրականացնելով ծրագրային ապահովման թեստավորում:</p>
	<p>3.7 Արտադրության համակարգի վերջնականացում</p>	<p>Արտաքին առևտրի ինդեքսների հաշվարկման ծրագրային փաթեթում 3.5 և 3.6 կետերով պայմանավորված փոփոխությունների ճշգրիտ կատարում:</p>
<p>4. Հավաքում</p>		
	<p>4.1 Գլխավոր համակցության և ընտրանքի ձևավորում</p>	<p><u>Գլխավոր համակցությունը</u> ձևավորում է ներմուծվող, արտահանվող ապրանքատեսակների բազայի հիման վրա յուրաքանչյուր հաշվետու տարվա սկզբում ըստ բոլոր երկրներ, ԱՊՀ երկրներ, աշխարհի այլ երկրներ, այդ թվում՝ ԵՄ երկրներ ուղղությունների, իսկ ապրանքատեսակների <u>ընտրանքը</u> ձևավորվում է յուրաքանչյուր ամիս, բազիսային տարում և հաշվետու ամսում</p>

		համընկնող ապրանքատեսակների հիման վրա:
	4.2 Հավաքման կազմակերպում	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայության կողմից ՀՀ վիճակագրական կոմիտեի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնին յուրաքանչյուր ամիս տրամադրվում է տեղեկատվական բազա ՀՀ արտաքին առևտրի ծավալների մասին:
	4.3 Հավաքման իրականացում	Տվյալների հավաքումն իրականացվում է ՀՀ մաքսային ծառայության կողմից: Որպես տվյալների սկզբնական աղբյուր հիմք են հանդիսանում ներմուծման, արտահանման բեռնամաքսային հայտարարագրերը (ղեկյարացիաները):
	4.4 Հավաքման վերջնականացում	Տես 4.2 կետը:
	<i>5. Մշակում</i>	
	5.1 Տվյալների ինտեգրում	ՀՀ վիճակագրական կոմիտեի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի յուրաքանչյուր ամիս գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնին տրամադրում է արտաքին առևտրի միավորի արժեքի ինդեքսի հաշվարկման համար անհրաժեշտ տեղեկատվական բազան MS Office Access ծրագրային փաթեթով:
	5.2 Դասակարգում և կողավորում	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայության կողմից տրամադրվող տեղեկատվական բազայում ներմուծվող, արտահանվող ապրանքատեսակները դասակարգված և ծածկագրված են ըստ ԱՏԳԱԱ դասակարգչի:
	5.3 Վերանայում և հաստատում	ՀՀ վիճակագրական կոմիտեի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի կողմից տրամադրվող բազայում տվյալների վերանայում և հաստատում չի իրականացվում:
	5.4 Խմբագրում և իմպուտացիա	Բացակա ապրանքատեսակների գների հաշվարկ չի իրականացվում:
	5.5 Նոր փոփոխականների և միավորների ձևավորում	Արտաքին առևտրի՝ ներմուծման, արտահանման միջին գների ինդեքսի հաշվարկն իրականացվում է հաշվարկված գնային տեղեկատվության հիման վրա նոր փոփոխականների՝ գների ինդեքսների հաշվարկման ճանապարհով:
	5.6 Կշիռների	Ազդեգացման տարբեր մակարդակներում

	հաշվարկում	կշռման համակարգը ձևավորվում է ըստ բոլոր երկրներ, ԱՊՀ երկրներ, աշխարհի այլ երկրներ, այդ թվում՝ ԵՄ երկրներ ուղղությունների ներմուծման, արտահանման ծավալների արժեքային ցուցանիշներից:
	5.7 Ագրեգատների հաշվարկում	Արտաքին առևտրի ինդեքսների հաշվարկն ըստ ներմուծման, արտահանման բոլոր երկրներ, ԱՊՀ երկրներ, աշխարհի այլ երկրներ, այդ թվում՝ ԵՄ երկրներ ուղղությունների իրականացվում է Լասպեյրեսի բանաձևով, ամսական պարբերականությամբ: Գների ամսական ինդեքսը հաշվարկվում է բազիսային մեթոդով:
	5.8 Տվյալների ֆայլերի վերջնականացում	Արտաքին առևտրի՝ ներմուծման, արտահանման միջին գների ինդեքսի հաշվարկը համարվում է վերջնական: Այն վերահաշվարկվում է միայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայության կողմից տրամադրվող ճշգրտված տեղեկատվական բազայի հիման վրա:
	<i>6. Վերլուծություն</i>	
	6.1 Նախնական արդյունքների նախապատրաստում	Արտաքին առևտրի՝ ներմուծման, արտահանման միջին գների ինդեքսի հաշվարկում որակական տարբերության և սեզոնային տատանումների ճշգրտումներ չեն կատարվում:
	6.2 Արդյունքների վավերացում	Ցուցանիշների ստացման ողջ ընթացքում խստորեն պահպանվում են դրանց ստացման մեթոդաբանական պահանջները՝ համաձայն նախապես սահմանված դասակարգումների, մեթոդաբանական ուղեցույցների:
	6.3 Արդյունքների մեկնաբանում և բացատրում	Ամփոփ ցուցանիշների ստացումից հետո իրականացվում է դրանց տրամաբանական վերլուծում՝ օգտագործելով նախորդ ամիսների վերաբերյալ համապատասխան ցուցանիշների դինամիկան:
	6.4 Բացահայտման հսկողության կիրառում	Խստորեն պահպանվում են ինչպես հրապարակման ենթակա, այնպես էլ վիճակագրական տեղեկատվության օգտագործողների կողմից հայցվող վիճակագրական ցուցանիշների գաղտնիությունը, այն է դրանց գերծ լինելը անհատական (անվանական) տեղեկություններից, համաձայն «Պաշտոնական վիճակագրության մասին օրենքի» և 2001 թվականի հունիսի 25-ի «Վիճակագրական



		գաղտնիքի պահպանման կարգը հաստատելու մասին» ՀՀ ՎՊԽ N 53 որոշման (տես՝ <a href="http://www.armstat.am/file/doc/99454478.pdf">http://www.armstat.am/file/doc/99454478.pdf</a> հղումը):
	6.5 Արդյունքների վերջնականացում	Մինչ վերջնական տեղեկատվության կիրառումն ըստ նպատակների, ստուգվում է տվյալների բազայից դեպի էլքային աղյուսակներ տեղափոխվող տվյալների ճշգրտությունն ըստ ներմուծման, արտահանման բոլոր երկրներ, ԱՊՀ երկրներ, աշխարհի այլ երկրներ, այդ թվում՝ ԵՄ երկրներ ուղղությունների:
	<i>7. Տարածում</i>	
	7.1 Ելքային համակարգերի արդիականացում	Յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում իրականացվում է ներմուծման, արտահանման տեղեկատվական բազայի և հաշվարկային աղյուսակների արդիականացում, նախապատրաստում հաջորդ հաշվետու տարվան:
	7.2 Տարածման արտադրանքների արտադրում	<p>Տարածվող արտադրանքի համար իրականացվում են արտադրական բոլոր քայլերը՝ բացատրական տեքստի, աղյուսակների, գծապատկերների և այլ նյութերի նախապատրաստում, այդ արտադրանքների խմբագրում և դրանց համապատասխանեցում հրապարակման ստանդարտներին:</p> <p>Վիճակագրական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է հայերեն, անգլերեն և/կամ ռուսերեն լեզուներով հրապարակվում է ներքոհիշյալ տարեգրքերի և վիճակագրական ժողովածուների միջոցով.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» (հայերեն, ռուսերեն, անգլերեն),</li> <li>2. «Հայաստանը թվերով» վիճակագրական ժողովածու (հայերեն, անգլերեն),</li> <li>3. «Գները և գների ինդեքսները ՀՀ-ում» վիճակագրական ժողովածու (հայերեն, անգլերեն),</li> </ol> <p><i>էլեկտրոնային տարբերակ</i></p> <p>Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն (ամբողջական), ռուսերեն, անգլերեն, հետևյալ հասցեով. <a href="http://www.armstat.am/am/?nid=82">http://www.armstat.am/am/?nid=82:</a></p> <p>Ամսական և պատմական տվյալները հասանելի են հայերեն, անգլերեն լեզուներով, հետևյալ հասցեով</p>

		<a href="https://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?xid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6&amp;rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6">https://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?xid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6&amp;rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6:</a>
	7.3 Տարածման արտադրանքների թողարկման կառավարում	Վիճակագրական տեղեկատվության տարածումը կատարվում է համապատասխան Արմստատի հնգամյա և տարեկան վիճակագրական ծրագրերով նախատեսված ժամանակացույցի: Վիճակագրական տեղեկատվություն ներկայացնողների կողմից ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության փոփոխման կամ ճշգրտումներ կատարելու դեպքում համապատասխան փոփոխությունների և ճշգրտումների են ենթարկվում նաև Արմստատի կողմից արդեն իսկ հրապարակված ցուցանիշները:
	7.4 Տարածման արտադրանքների խթանում	Տարածման արտադրանքների տրամադրում: Գործիքների օգտագործում օգտագործողների հետ հաղորդակցությունը կառավարելու համար: Կայքի, ֆեյսբուքի և այլ միջոցների օգտագործում:
	7.5 Օգտագործողների աջակցության կառավարում	Օգտագործողների կողմից վիճակագրական չիրապարակվող ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության պաշտոնական հայցման դեպքում հնարավորության սահմաններում իրականացվում է լրացուցիչ ցուցանիշների հաշվարկ և տրամադրում նրանց՝ միաժամանակ պահպանելով վիճակագրական տեղեկատվության նկատմամբ գաղտնիության սկզբունքը:
<b>8. Գնահատում</b>		
	8.1 Գնահատման միջոցների հավաքում	Արտաքին առևտրի՝ ներմուծման, արտահանման գների վիճակագրության տվյալների բազայում ընդգրկված ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության արժանահավատության գնահատման միջոց են ծառայում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայության կողմից ստացվող տվյալները՝ ներմուծման, արտահանման բեռնամաքսային հայտարարագրերը (դեկլարացիաները):
	8.2 Գնահատման իրականացում	Արտաքին առևտրի՝ ներմուծման, արտահանման գների վիճակագրության ցուցանիշների գնահատում որակի տեսանկյունից իրականացվում է ՀՀ վիճակագրական կոմիտեի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի հետ համագործակցելով:

8.3 Գործողությունների  
ծրագրի համաձայնեցում

Համեմատվող միևնույն ցուցանիշի վերաբերյալ,  
տարբեր աղբյուրներից ստացվող  
տեղեկատվության միջև  
անհամապատասխանությունների  
հայտնաբերման դեպքում իրականացվում է  
դրանց հնարավոր պատճառների բացահայտում,  
որի հիման վրա իրականացվում են  
համապատասխան վերջնական ճշգրտման  
աշխատանքներ: